ԿԱՐԾԻՔ

Արշակ Աշոտի Ներսիսյանի «Պետական գնումների համակարգի կատարելագործման ուղիները (ՀՀ օրինակով)» թեմայով ատենախոսության վերաբերյալ՝ Ը.00.02 – «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունում ուսումնասիրության է ենթարկվում պետական կառավարման համակարգում մշտապես արդիական թեմաներից մեկը՝ պետական գնումների համակարգը: Պետական բյուջեի ծախսային մասը՝ դրա անքակտելի բաղկացուցիչն է, ուստի պետական գնումների համակարգին վերաբերող աշխատանքները սովորաբար ժամանակավրեպ չեն լինում: Այս ոլորտում խորը վերլուծության ենթարկված և զգուշորեն ներդրված բարեփոխումները կարող են պետական բյուջեի խնայողություններ և արդյունավետություն ապահովել: Անգամ ամենազարգացած տնտեսություններ ու պետական կառավարման համակարգեր ունեցող երկրներում պետական գնումների գործընթացի շարունակական մոնիթորինգ և բարելավումներ են իրականացվում: Աշխատանքում վերլուծության են ենթարկվում պետական գնումներին վերաբերող այնպիսի խնդիրներ, որոնք բխում են և՛ պրակտիկ կիրառությունից, և՛ մեթոդական բնույթ են կրում: Այդպիսիք են պետական գնումների զարգացման միջազգային փորձի ուսումնասիրությունը, գնման ձևերի ընտրությունը և դրանց արդյունավետությունը, գնումների էլեկտրոնային համակարգը, գնահատող հանձնաժողովների գործունեությանը վերաբերող խնդիրները, նախահաշվային գների ձևավորման մեխանիզմների ներդնումը, երկրի սահմաններից դուրս կատարվող գնումների օրենսդրական

կարգավորումները և դրանց բացերը, գնման առարկաների տեխնիկական բնութագրերը, պայմանագրերի կնքումն ու կատարումը, չարաշահումները և դրանց վերահսկողությունը, գնումների հաշվետվողականությունը և շատ ուրիշ առանցքային հարցեր: ՀՀ-ում պետական գնումների համակարգը մշտապես ուշադրության կենտրոնում է՝ կախված աշխարհաքաղաքական մարտահրավերներից շարունակական ռեֆորմների է ենթարկվում, սակայն շարունակում է ինովացման կարիք ունենալ:

Աշխատանքում պետական գնումների համակարգին առնչվող այնպիսի դրվագներին և բացերին է անդրադարձ կատարվում, որոնք և՛ նախկինում, և՛ ներկայումս պետական գնումների ինստիտուտով հետաքրքրված և դրա կատարելագործմամբ և ինովացմամբ շահագրգռված անձանց կողմից քննարկվել են և շարունակվում են քննարկվել:

Պետական գնումների ինստիտուտը մեծ կարևորություն ունի: Պետությունն իր առջև դրված սոցիալական, անվտանգային, տնտեսական և քաղաքական նպատակներին հասնում է պետական գնումների արդյունավետ համակարգի միջոցով: Բնական է, որ ազատ տնտեսական հարաբերությունների պարագայում՝ աշխարհում գոյություն ունեցող որևէ պետական կառավարման համակարգ չունի և երբեք չի կարող ունենալ բավականաչափ գործիքակազմ՝ բացառապես սեփական ուժերով և միջոցներով իրագործելու իր առջև դրված նպատակները: Դրա արդյունքում առաջ է գալիս արտապատվիրակման և արդյունավետ պետական գնումների համակարգի ձևավորման անհրաժեշտությունը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի առաջին տարբերակը ընդունվել է դեռևս 2000 թվականի հունիսի 5-ին, դրան հաջորդել է բազմաթիվ այլ օրենքների և իրավական ակտերի ընդունումը: ՀՀ կառավարության վերջին՝ 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի

կազմակերպման կարգը մինչ այս պահը փոփոխությունների է ենթարկվել 17 անգամ: Այս փաստը նույնպես խոսում է պետության կողմից գնումների համակարգի կարևորությունը և կատարելագործման անհրաժեշտությունը գիտակցելու մասին, ինչպես նաև ակներև է դարձնում այն հանգամանքը, որ համակարգի կատարելագործմանն ուղղված քայլերը բավական արդյունավետ չեն:

Արդյունավետ պետական գնումների համակարգը պետք է ապահովի՝

- Բարձր որակ և խնայողություններ չափորոշիչների ճիշտ համադրում: Ակնհայտ է, որ խնայողությունների բարձր մակարդակը հանգեցնելու է ցածր որակի, ուստի որքան մեծ են խնայողությունները, այնքան ցածր է գնումների որակը: Այս երկու չափանիշների միջև առերևույթ կապ կա, ուստի սա արդունավետության թերևս ամենակարևոր սկզբունքն է:
- Կայունություն, ճկունություն և հուսալիություն: Այս չափորոշիչները նույնպես փոխկապացված են: Սրանք անհրաժեշտ են համակարգը ցանկացած պահին և ցանկացած իրավիճակում կիրառելու համար՝ իմանալով, որ այն անհրաժեշտ արդյունավետություն կցուցաբերի:
- Նպատակայինություն և գնումների առաջնահերթությունների դասակարգում, որոնք սերտորեն կապված են տնտեսության զարգացման քաղաքականության, պետական գնումների պլանավորման և ֆինանսավորման հետ:

Պետական գնումների բարձր արդյունավետությունը կհանգեցնի նաև արտադրական ներուժի մեծացմանը: Եթե պետական գնումները ճիշտ ուղղորդում ստանան՝ կարող են ներմուծվող արտադրանքը տեղականով փոխարինելու խթան հանդիսանալ: Ավելի լավ է գնել թանկ, բայց ներքին շուկայից: Ցանկացած արտաքին կախում կարող է վտանգավոր լինել՝ հատկապես եթե գնումը վերաբերում է կարևոր առաջնահերթություններին ինչպիսիսք են զինտեխնիկան կամ դեղորայքը: Վերջերս ՀՀ-ն բախվել է Ռուսատանի Դաշնությունից զենքի ներմուծման խնդրին:

Այսպիսի դեպքերում խնդիրը վերածվում է ոչ թե էժան և որակով գնումներ կատարելուն, այլ մատակարարների բացակայությանը: Եթե ՀՀ-ն որոշ գնման առարկաների դեպքում իր առջև դնի թանկ, սակայն տեղական արտադրություն ձեռք բերելու նպատակ, ապա հետագայում կախված չի մնա որևէ արտաքին արտադրողից:

Աշխատանքի թեման վերաբերում է արդյունավետության վերոնշյալ հատկանիշները ձևավորելուն առնչվող մի շարք խնդիրների վերհանմանը և դրանց լուծումներ առաջարկելուն: Այս տեսանկյունից պետական գնումների համակարգին վերաբերող միջազգային փաստաթղթերը, որոնք ՀՀ-ն վավերացրել է՝ շատ բան չեն նախատեսում: Դրանցով սահմանված հիմնական սկզբունքները ուղղված են հավասարությանը, թափանցիկությանը, արդարությանը, սակայն ոչ երբեք ազգայինը խթանելուն:

Աշխատանքում ներկայացվում են պետական գնումների համակարգի բաց կողմերի վերհանում, վերլուծություն և առաջարկություններ՝ հաշվի առնելով մեր կողմից վավերացված միջազգային փաստաթղթերը, դրանցում ամփոփված սկզբունքները, տեղական իրավակարգավորումները և առաջարկվող լուծումների իրագործելիությունը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել ՀՀ պետական գնումների գործընթացը, վերհանել առկա խնդիրները և առաջարկներ ներկայացնել դրանց լուծման ուղղությամբ:

Նշված նպատակին հասնելու համար աշխատանքում դրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- Ուսումնասիրել պետական գնումների էությունը և նշանակությունը երկրի տնտեսության զարգացման համատեքստում,
- Վերլուծել պետական գնումների գործընթացի իրավական հենքը ՀՀ-ում,
- Ուսումնասիրել պետական գնումների գործընթացի կազմակերպման զարգացած երկրների փորձը,
- Վերլուծել պետական գնումների գործընթացի կազմակերպման խնդիրները ՀՀ-ում,
- Բացահայտել պետական գնումների գործընթացին մասնակցության հետ կապված հիմնական խոչընդոտները ՀՀ-ում,
- Նախանշել պետական գնումների համակարգի բարեփոխման առանցքային ուղղությունները ՀՀ-ում,
- Ներկայացնել ՀՀ պետական գնումների ընթացակարգերի կատարելագործման առաջարկներ,
- Ներկայացնել առաջարկներ պետական գնումների գործընթացի վերահսկողության մեխանիզմների բարելավման ուղղությամբ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՆՈՐՈՒՅԹԸ

Աշխատանքում իրականացված հետազոտության և վերլուծությունների հիման վրա ստացվել են տեսական և կիրառական բովանդակության գիտական արդյունքներ, որոնցից գիտական նորույթ են առանձնացվել հետևյալները.

1. Պետական գնումների գործընթացի տեսանկյունից աութսորսինգի էության բացահայտման և համակողմանի վերլուծության արդյունքում վեր են հանվել աութսորսինգային քաղաքականության արդյունավետ իրականացման հիմնական սկզբունքները, որոնք հաշվի առնելով պետությունը կարող է արտապատվիրակվող ծառայությունների ձեռքբերման ռիսկերը էականորեն նվազեցնել:

2. ՀՀ գնումների համակարգում առկա խնդիրների լուծման նպատակով մշակվել են գնումների օրենսդրության փոփոխության առաջարկներ:

3. ՀՀ պետական գնումների համակարգի վերահսկողական մեխանիզմների համակողմանի ուսումնասիրման արդյունքում մշակվել են վերահսկողական մեխանիզմների կատարելագործման համալիր կառուցակարգեր:

4. Իրականացվել է ՀՀ պետական գնումների մասին օրենսդրությամբ նախատեսված գնման մրցութային ընթացակարգերի արդյունավետության վերլուծություն, մշակվել է գնման մրցութային ընթացակարգերի արդյունավետության հաշվարկման մեթոդոլոգիական նոր մոտեցում և դրա հիման վրա կատարված հաշվարկների միջոցով բացահայտվել են գնման ընթացակարգերի առավելություններն ու թերությունները:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից և առաջարկություններից, օգտագործված գրականության ցանկից: Ատենախոսության տեքստը շարադրված է 152 էջի վրա:

Ատենախոսության ներածությունում հիմնավորվել է հետազոտության թեմայի արդիականությունը, ձևակերպվել են հետազոտության նպատակն ու խնդիրները, օբյեկտը և առարկան, ներկայացվել են ուսումնասիրության հիմնական արդյունքներն ու գիտական նորույթը, դրանց գիտագործնական նշանակությունը և կիրառությունը, ատենախոսության արդյունքների փորձարկման հնարավորությունները:

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Ատենախոսության առաջին նորույթում և աշխատանքի այլ բաժիններում Հեղինակի կողմից առաջ է քաշվում պետական գնումների աութսորսինգի առավել արդյունավետ լինելու գաղափարը, սակայն թվային օրինակով կամ հաշվարկով հիմնավորված չէ այն:
2. Ատենախոսության երկրորդ և երրորդ նորույթներն ամբողջությամբ վերանայման կարիք ունեն, քանի որ միայն գնումների օրենսդրության փոփոխության առաջարկները չեն կարող դիտարկվել որպես գիտական նորույթ: Հեղինակի կողմից բացահայտված խնդիրը և դրա լուծման ձևը, մեթոդաբանությունը կարելի էր դիտարկել որպես գիտական նորույթ: Նույն դիտողությունը վերաբերում են նաև երրորդ նորույթին, մասնավորապես՝ մշակվել են վերահսկողական մեխանիզմների կատարելագործման համալիր կառուցակարգեր:
3. Հեղինակի կողմից առաջարկված գնման մրցութային ընթացակարգերի արդյունավետության հաշվարկման մեթոդոլոգիայի շրջանակում հաշվի չեն առնվել որակական գործոնները, մասնավորապես՝ բաց մրցույթի և էլեկտրոնային աճուրդի եղանակների միջև գնումների արդյունավետությունը գնահատելիս պետք է հաշվի առնել, որ այս գնումների եղանակները հաճախ կիրառելի են տարբեր ապրանքային շուկաներում, օրինակ՝ էլեկտրոնային աճուրդի եղանակով չի իրականացվում շինարարական աշխատանքների գնումներ, հետևաբար, համեմատության արդյունքներից եզրահանգումները բավարար հիմնավորված չեն լինի:
4. Ատենախոսության Գծապատկեր 1.4-ում (էջ 26) պետական գնումները և պետական բյուջեի ծախսերը նույնականացվել են հեղինակի կողմից, ինչը

ճիշտ չէ. պետական բյուջեի ծախսերի ընդհանուր գումարից նվազագույնը պետք է հանվեին սոցիալական բնույթի որոշ ծախսեր, մասնավորապես՝ նպաստների, թոշակների ուղղությամբ կատարվող ծախսերը, որոնք մեծ մասնաբաժին ունեն պետական բյուջեում: Հակառակ պարագայում միջազգային վիճակագրության հետ համադրելը տեղին չէ:

5. Ատենախոսության Գծապատկեր 1.3-ը (էջ 25) անճշտություն ունի, մասնավորապես՝ հորիզոնական առանցքի անվանումը վերանայման կարիք ունի:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կատարված դիտողությունները չեն նսեմացնում ատենախոսության արդյունքներն ու արժանիքները: Արշակ Աշոտի Ներսիսյանի ատենախոսությունն ունի արդի գիտագործնական նշանակություն, իրենից ներկայացնում է ինքնուրույն, ամբողջական հետազոտություն, որում դրված և լուծված են պետական գնումների համակարգի համար կարևորագույն խնդիրներ:

Հետազոտության հիմնական արդյունքները հրապարակված են 6 գիտական հոդվածներում: Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է ուսումնասիրության բովանդակությանը և արտացոլում աշխատանքի հիմնական դրույթներն ու արդյունքները:

Արշակ Աշոտի Ներսիսյանի «Պետական գնումների համակարգի կատարելագործման ուղիները (ՀՀ օրինակով)» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 6-րդ և 7-րդ կետերի պահանջներին, իսկ հեղինակն արժանի է Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն

և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍ
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ՝ **Ս. Հ. Պարսյան**

Պարոն Ս. Հ. Պարսյանի

ստորագրությունը հաստատում եմ՝

ՀՊՏՀ ԳԻՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **Ն. Հ. Դարբինյան**

15.01.2024թ.